Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարան

Հաշվետվություն

ՀՀ Արմավիրի մարզի Արտամետ համայնքի ղեկավարի 2020թ. -ի 1-ին կիսամյակի գործունեության վերաբերյալ

2020թ-ի հուլիսի 31-ին ժամը 14:00-ին կայացավ Արմավիրի մարզի Արտամետ համայնքի ղեկավարի 2020թ-ի 1-ին կիսամյակի հաշվետվությունը՝ :

Հարգելի Արտամեցիներ, հարգարժան համայնքի ավագանու անդամներ և հյուրեր : ՀՀ Արմավիրի մարզպետարանի կողմից սահմանված կարգի համաձայն այսօր ես ձեր ուշադրությանն եմ ներկայացնում մեր համայնքապետարանի կողմից 2020թվականի 1-ին կիսամյակում կայացած աշխատանքները ըստ գործունեության բնագավառների:

Հաշվետվության ընդգրկված ժամանակաշրջանում՝ 2020թ 1-ին կիսամյակի ընթացքում գումարվել է համայնքի ավագանու թվով 3 նիստ,1-ը արտահերթ որի արդյունքներով կայացվել է 24 որոշում, քննարկվել է ֆինանսական հարցեր:Ինչպես նաև քննարկվել և իրականացվել են 2020թ-ի ընդացքում նախատեսված աշխատանքների ընդացքը կապված համայնքային սեփականություն հանդիսացող հողատարածքների,ինչպես նաև տնամերձերի չափագրման և դրանց գրանցման աշխատանքները:Միաժամանակ համայնքի կարիքների համար դրանց օտարման հարցը:

Ֆինանսների բնագավառում.

2020 թվականի առաջին կիսամյակի համայնքի բյուջեի եկամտային և ծախսային մասերը:

ՀՀ օրենսդրության սահմանված կարգով 2020 թվականի առաջին կիսամյակի ընթացքում տնօրինվել են համայնքի բյուջեի միջոցները և ապահովել դրանց նպատակային օգտագործումը: Օրենքով սահմանված կարգով որպես պետության կողմից պատվիրակված լիազորություն համայնքում կազմակերպվել է գույքահարկի և հողի հարկի գանձումներ: 2020 թվականի հուլիս 31-ի դրությամբ պլանով սահմանված՝

	պլան		փաստացի	
Հողի հարկ՝	6.000.000 հ.դ	---	2 147 500 հ.դ	17.9%
Գույքահարկ՝	100.000հ.դ	---	192 100 հ.դ	96.1 %
Հողի վարձ,՝	195.100հ.դ	---	120.000 հ.դ	61.5 %

Սեփական եկամուտների մուտքերի ապահովման համար իմ կողմից գրավոր ուղարկվել է բոլոր մեծ պարտքեր ունեցող հողի սեփականատերերին և վարձակալներին և ժամկետ է սահմանվել որպեսզի մինչև տարեվերջ հավաքագրվի և մուտքագրվի պլանով նախատեսված գումարը:

Քաղաքաշինության և կոմունալ տնտեսության բնագավառում.

2020թ-ի առաջին կիսամյակում համայնքը հայտ ներկայացրեց կառավարություն <<Արտամետ համայնքի գազաֆիկացում>> ծրագրի համար օժանդակություն ստանալու նպատակով և կառավարության կողմից արժանացավ հավանության:Համայնքապետարանը երկար բանակցություններից հետո հասավ այն բանին,որ <<Թանա Պարտեզ>> ՍՊԸ-ն հայտնեց իր աջակցությունը Արտամետ համայնքի գազաֆիիկացում ծրագրին:Սույն թվականի օգոսոսի 11-ին կկայանա հայտարարված մրցույթը, որից հետո կսկսվեն ամբողջ համայանքի գազաֆիկացման աշխատանները:Ներկայացրել ենք հայտեր նաև համայնքում <<Խաղահրապարակի կառուցման>> և <<Հուշարձանի տարածքի բարեկարգման>> համար և սպասում ենք ծրագրերի հաստատմանը աշխատանքները սկսելու համար:

Հողօգտագործման բնագավառ.

Հողերի արդյունավետ օգտագործման ու պահպանության խնդիրները լուծելու համար համայնքի ղեկավարը վերահսկողություն է իրականացրել հողօգտագործողների, հողի սեփականատերերի կողմից հողային օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ: Վերահսկողություն է սահմանվել համայնքի վարչական սահմաններում գտնվող հողամասերի ընթացիկ հաշվառմանը, հողային հաշվեկշռի կազմման, ներտնտեսային հողաշինարարական աշխատանքների իրականացման նկատմամբ,բացի այդ լրացուցիչ աշխատանքներ են իրականացվում որոշ հողատերերի կողմից հիմնած պտղատու և խախողի այգիների հիմնման աշխատանքների փաստագրման և հաշվառման համար որի արդյունքում լրացուցիչ գումարներ են մուտք լինում բյուջե:

Գյուղատնտեսական բնագավառում.

ա) Հունվարի 1-ից մինչև 18-ը համայնքում առկա կենդանիների ըստ տեսական հաշվառումը և սահմանված ժամկետում հաշվառման վերաբերյալ հաշվետվությունը ներկայացվել է վիճակագրական ծառայություն:

Համաձայն այդ հաշվառման պարզվել է, որ համայնքում կա մանր եղջերավոր՝ 1613 գլուխ, խոշոր եղջերավոր անասուններ՝ 393 գլուխ, խոզեր՝ 25, թռչուն՝ 622 :

բ) Համայնքի ղեկավարը օրենքով իրեն վերապահված պետության կողմից պատվիրակված լիազորության շրջանակներում հաշվետու ժամանակահատվածում իրականացրել է իր իրավասությունների սահմաններում կազմակերպվել է առկա անասնագլխաքանակության հիվանդությունների կանխման, ինչպես նաև հակահամաճարակային միջոցառումները և ագրարային այլ կանոնների պահպանման աշխատանքները:

գ) Համայքում իրականացվել է աղբահանության աշխատանքներ ՝ ըստ գրաֆիկի: Գործող օրենսդրության համաձայն աղբահանությունը պետք է իրականացվի համայքի բնակիչների հաշվին,որի համար սահմանված էր յուրաքանչյուր տնտեսությունից գանձել 300 հհ դրամ ամսեկան գումար,որը սակայն չի իրականացվել և ամբողջ աղբահանությունը իրականացվել է համայնքապետարանի միջոցների հաշվին: 2020թ-ին նախատեսվել է իրազեկել ողջ բնակչությանը որպեսզի գանձվի 50 հհ դրամ մեկ շնչին ամսեկան վճարը:

Համայնքի ղեկավարը հաշվետվությամբ ընկած ժամանակահատվածում աջակցություն է ցուցաբերում գյուղացիական տնտեսություն վարող ֆերմերների մարդկային ռեսուրսներով ապահովելու հարցում, որի արդյունքում ստեղծվել է շուրջ 25 աշխատատեղ և միջին օրական աշխատավարձը կազմել է 5000-6000 ՀՀ դրամ:

Համայնքի հողային հաշվեկշռի համաձայն մեր համայնքում հաշվարկված է 837.44հեկտար վարելահող, 561.76 հեկտար բազմամյա տնկարկներ:

Համայնքապետարանի կողմից հունիսի 1-ի դրությամբ ցանքատարածությունները ըստ մշակաբույսերի ներկայացվել են վիճակագրական ծառայություն:

Հիմնախնդիրներ

1.<<Խաղահրապարակի կառուցում>>

2.<<Հուշարձանի տարածքի բարեկարգում>>

04.08.2020

X

Համայնքի ղեկավար՝ Подписано: DAVTYAN ANAHIT 6201650180 Ա. Դավթյան